խիստ ուշադիր էին դէպի հայ պատուիրակութիւնը, իսկ Մուսաւաթի համագումարը նոյնիսկ մի ուղերձ յանձնեց նրան, բայց հէնց սկզբից երևան եկաւ, որ կողմերը կանգնած են անհաշտելի տեսակէտների վրա:

Սահմանների հարցի համար հայկ. պատուիրակութիւնը առաջարկում էր որոշել ժամանակաւոր սահմանագիծ, իսկ ադրբէջանցիք պնդում էին վերջնական լուծման վրա: Հայկ. պատուիրակութիւնը յարմար էր համարում սկզբից կարգադրել գործնական խնդիրները և որոշ նպաստաւոր մթնոլորտ ստեղծելուց յետոյ միայն անցնել սահմանային հարցին. ադրբէջանցիք, ընդհակառակը, անհրաժեշտ էին համարում սկսել հէնց սահմաններից: Երկու դէպքում էլ հայկ. պատուիրակութիւնը տեղի տուեց: Բայց այն օրը, երբ պէտք է սկսէր սահմանագծի քննութիւնը, ադրբ. պատուիրակութիւնը յայտարարեց, թէ, երկար մտածելուց յետոյ, ինքը եկել է այն եզրակացութեան, որ ներկայ պայմաններում անհնար է անցկացնել այնպիսի սահմանագիծ, որ բաւարարի երկու կողմին էլ, ուստի պէտք է բաւականանալ միայն ընդհանուր սահմանորոշումով: Իսկ դրանից առաջ հարկաւոր է բոլորովին վերացնել փոխադարձ անվստահութիւնը, տարբեր օրիէնտացիաները և ստեղծել կովկասեան ժողովուրդների միութիւն, կազմել կոնֆեդերացիա: Դրանով ոչ միայն կը հեշտանայ ներքին խնդիրների լուծումը, այլ և արտաքին ճանաչումը: Թէ թանձրացեալ կերպով ի՞նչ ձևով էր հասկանում կոնֆեդերացիան, ադրբէջանեան պատուիրակութիւնը չպարզեց:

Հայաստանի պատուիրակութիւնը առարկեց, թէ կոնֆեդերացիայի համար պակասում են մի շարք էական պայմաններ. — մեր հանրապետութիւնների անկախութիւնը դեռ ևս չի ճանաչուած, մեր հանրապետութիւնների չէզոքութիւնը դեռ չէ ապահովուած, սահմանները որոշ չեն և այլն: Այս պայմաններում կոնֆեդերացիան անիրագործելի բան է:

Սրա վրա խորհրդաժողովը ընդհատուեց, և հայկ. պատուիրակութիւնը մեկնեց Երևան՝ նոր հրահանգներ ստանալու և խորհրդաժողովը Թիֆլիսում շարունակելու որոշումով:

*

Հակառակ աննպաստ պայմանների, ներքին կեանքում էլ Հայաստանը հետզհետէ ամրանում ու բարգաւաճում էր: 1919թ. ամառը Հայաստանը արդէն կազմակերպուած պետութիւն էր. երկիրը բաժանուած էր 10 գաւառների՝ համապատասխան վարչութեամբ ու դատաստանական իշխանութեամբ. բոլոր գաւառներում կային հաշտարար դատարաններ, որոնք, բացի Արդահանի գաւառից, դատավարութիւնը անում էին հայերէն լեզուով: Երևանում կար շրջանային դատարան, դատաստանական պալատ, Սենատ: Մայիս 28-ին Ղամարլու, Վաղարշապատ, Աշտարակ, Իգդիր, Կողբ, Ղարաքիլիսա, Ջալալ-Օղլի, Դիլիջան գիւղերը վերածուեցին քաղաքի:

Երկրի վարչութիւնը բարելաւելու նպատակով, մայիս 25-ին Երևանում գումարուեց գաւառապետների անդրանիկ համագումարը ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասեանի նախագահութեան տակ: Ներկայ էին